ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի հոկտեմբերի 03-ի թիվ 1.3 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/23

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/23 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 01.10.2019թ.-03.10.2019թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 03.10.2019թ. տրամադրված պարզաբանումները՝

<u>Հարցադրում N 1</u> *<<Հարգելի պատվիրատու: Կարելի է ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/23 հայտով 1 չափաբաժնի բնութագիրը հստակացնել ՀՀ գնումների մասին օրենքի 13 հոդվածի կետերին համահունչ: Մի թե Canon 2520 բազմաֆունկցիոնալ սարքը այդքան անփոխարինելի է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում օգտատերերի համար: Մի թե դժվար է ուսումնասիրել շուկան, ստեղծել հավասար պայմաններ, թույլ տալ մրցույթներում հանդես գալ ՀՀ-ում գործող բոլոր բրենդներին: Հարգանքներով:>>:*

<u>Պարզաբանում N 1</u> Հրավերը կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Հրավերով սահմանված են <<Բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային>> պարամետրերին ներկայացվող նվազագույն պահանջները, որն անհրաժեշտ է Դատական դեպարտամենտի կարիքների բավարարման համար:

<u>Հարցադրում N 2</u> *<<Հարգելի պատվիրատու: ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/23 հայտի 1 չաբաժնում Բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային, նկարագրված բնութագրով կա մեկ սարք՝ Canon 2520: Հետևաբար տվյալ չափաբաժնի համար հավասար պայմաններ չի ստեղծված մրցույթին մեկից ավելին նման սարքեր արտադրողների մասնակցության համար: Առաջարկում ենք բնութագիրը կազմել ՀՀ գնումների մասին օրենքի 13 հոդվածի համապատասխան կետերով, ընդլայնելով նման սարքեր արտադրողների մասնակցությունը մրցույթին: Հարգանքներով:>>:*

<u>Պարզաբանում N 2</u> Հրավերը կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Հրավերով սահմանված են <<Բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային>> պարամետրերին ներկայացվող նվազագույն պահանջները, որն անհրաժեշտ է Դատական դեպարտամենտի կարիքների բավարարման համար:

<u>Հարցադրում N 3</u> *<<Հարգելի պատվիրատու,*

Խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցերը՝ կապված 4-րդ չափաբաժնում պահանջվող անխափան սնուցման սարքերի տեխնիկական բնութագրի հետ:

1. Տեխնիկական բնութագրում նշված է "ինտերֆեյսը՝ IEC-320 C14, NEMA 5-15P/schuko cee7/7p միացման հնարավորությամբ": Արդյո՞ք սա վերաբերվում է մուտքային ինտերֆեյսին, և արդյոք ի նկատի ունեք, որ առաջարկվող անխափան սնուցման սարքի մուտքային ինտերֆեյքսը պետք է լինի նշված 3 տարբերակներից որևէ մեկը:

2. Տեխնիկական բնութագրում նշված է "վերալիցքավորման ժամանակը առնվազն՝ 3 ժամ": Արյդոք սա նշանակում է, որ անխափան սնուցման սարքի վերալիցքավորման ժամանակը կարող է լինել 3 ժամից ավելի:

3. Տեխնիկական բնութագրում նշված է "Մարտկոցի երաշխիքային ժամկետը՝ առնվազն 3 տարի": Մի՞գուցե ի նկատի ունեք, որ մարտկոցի հաշվարկային կյանքի տևողությունը պետք է լինի 3 տարի, այլ ոչ թե երաշխիքային ժամկետը:

Շնորհակալություն:>>:

Պարզաբանում N 3

1.Անխափան սնուցման սարքի /մուտքային և ելքային/ ինտերֆեյսը կարող է լինել IEC-320 C14 կամ NEMA 5-15P, սակայն պարտադիր schuko cee7/7p միացման հնարավորությամբ:

2.Այո, կարող է:

3.Տեխնիկական բնութագրում նշված մարտկոցի համար սահմանված է երաշխիքային ժամկետ՝ առնվազն 3 տարի:

Հարցադրում N 4 *<<Խնդրում եմ պարզաբանել հետևյալ հարցերը՝ կապված 5-րդ չափաբաժնում պահանջվող սկաների տեխնիկական բնութագրերի հետ:*

1. Սկաների տեխնիկական բոնութագրում նշված է. "համատեղելի կենտրոնացված կառավարման ծրագրային համակարգի հետ": Խնդրում եմ նշել, թե ինչ կենտրոնացված կառավարման ծրագրային համակարգի հետ պետք է համատեղելի լինի սկաները:

2. Սկաների տեխնիկական բնութագրում նշված է, որ նրա հոսանքի սնուցումը պետք է լինի USB-ից: Սակայն նշված բարձր պարամետրերով և ADF-ով սկաների սնուցումը չի կարող լինել USB պորտով, այլ պետք է ունենա հոսանքի ադապտեր: Արդյոք սնուցումը հոսանքի ադապտերով ընդունելի է:>>:

Պարզաբանում N 4

1.<<Դատական ավտոմատացված համակարգ կառավարման ծրագրի>> և նմանատիպ ծրագրերի հետ:

2. Այո, ընդունելի է:

Հարցադրում N 5 *<< Բարև Ձեզ, խնդրում եմ պարզաբանել լոտ 5ի սկաների համար ուզել եք USB մուտքով սնուցում: Խնդրում ենք հստակեցնել արդյո՞ք ընդունելի է 220V Սնուցումով տարբերակը: Շնորհակալություն>>:*

Պարզաբանում N 5 Այո, ընդունելի է:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/23 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մ.Հայրապետյանին:

Հեռախոս՝ /010/ 511-787:

Էլեկտրանային փոստ՝ ddgnumner@mail.ru:

ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/23 ծածկագրով գնահատող հանձնաժողով: